ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԻՍՏՈՒՄ ՄԻ ՇԱՐՔ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 62-րդ հոդվածի 3-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խորհուրդը ՈՐՈՇՈՒՄ Է.

Ազգային ժողովի հոկտոմբերի 3-ին գումարվող հերթական նիստում՝ «Դատախազության մասին» (Կ-111-10.08.2017-ՊԻՄԻ-011/0) օրենքի նախագծի **քննարկման տևողությունը սահմանել 2 ժամ:**

««Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» (Կ-070-14.07.2017-ՏՏԳԲ-011/1) օրենքի նախագծի, ««Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի եւ Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի զորքերի (ուժերի) միացյալ խմբավորման մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» (Կ-092-26.07.2017-ՊԱ-011/0) և «Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ 2013 թվականի հունիսի 25-ի՝ «Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ ռազմատեխնիկական համագործակցության զարգացման մասին» պայմանագրի շրջանակներում մատակարարվող ռազմական նշանակության արտադրանքի առկայության եւ նպատակային օգտագործման նկատմամբ հսկողության իրականացման կարգի մասին»

համաձայնագիրը վավերացնելու մասին» (Կ-101-28.07.2017-ՊԱ-011/0) օրենքների նախագծերի **քննարկման տևողությունը սահմանել 90 րոպե:**

Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի նախագահ **Արա Բաբլոյան**

2017թ. հոկտեմբերի 2
Երևան
ԱԺԽՈ–024-Լ